ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

26. 09. 2021 *Ք. Իջևան*

Նախագահ՝ Վ.Ա. Աղաբաբյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի նիստին մասնակցում էին գիտական խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնների 2021-2022 ուստարվա աշխատանքային պլանների հաստատման մասին: /Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան/
2. Կիրառական արվեստի ֆակուլտետի 2021-2022 ուստարվա I կիսամյակի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին: /Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան/
3. Ամբիոններում 2021-2022 ուստարվա առարկայական փաթեթների առկայության մասին: /Զեկ. Հ. Ասատրյան/
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը արձանագրեց, որ կիսամյակի կտրվածքով անհրաժեշտությունը է դարձել պլանավորել ամբիոնների աշխատանքային գործունեությունը: Համավարակի և հեռավար ուսուցման պայմաններում դա առավել ևս կդյուրացնի ամբիոնների աշխատանքների կանոնակարգումը և վերահսկողությունը: Զեկուցողը նշեց, որ ամբիոնների աշխատանքային պլանները քննարկվել են ամբիոնային նիստերում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Ասատրյանը, Տ. Բագամյանը, Ք. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Կիրառական արվեստի ֆակուլտետի կառուցվածքում գործող «Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» և «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնների 2021-2022 ուստարվա աշխատանքային պլանները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը նշեց, որ համավարակի պայմաններում ֆակուլտետի 2021-2022 ուստարվա ուսումնական գործունեությունը կազմակերպված և նպատակային վարելու առումով աշխատանքային պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ: Այս փոփոխությունները թույլ են տալիս ֆակուլտետի գործունեությունը դարձնել առավել ճկուն և արդյունավետ: Զեկուցողը հայտնեց, որ աշխատանքային պլանը նախապես քննարկվել է դեկանատի նիստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Մխիթարյանը, Ա. Չիբուխչյանը, Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Կիրառական արվեստի ֆակուլտետի 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի վարիչ Հ. Ասատրյանը: Նա նշեց, որ ամբիոններում առարկայական փաթեթները հիմնականում առկա են: Ընթացքի մեջ են այն փաթեթները, որոնց ուսումնական պլաններում փոփոխություններ են տեղի ունեցել: Բացի այդ՝ կան նաև կամընտրական առարկաներ, որոնք դասավանդվում են վերջին տարին և այդ առարկաների համար գրվել են առարկայական ծրագրեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ք. Մխիթարյանը, Տ. Բագամյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոններում առարկայական փաթեթների վիճակը համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Աղաբաբյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Մխիթարյան